

**ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՄԵՐՎԻՍԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԵՎ
ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
Մարտիրոսյան Լ. Մ., Աբրահամյան Վ. Մ., Սարգսյան Ռ. Ս.,
Սարգսյան Հ. Մ.**

Հոդվածում ներկայացված է Շիրակի մարզի և Գյումրու հյուրանոցային սերվիսի առանձնահատկությունը և զբոսաշրջային համալիրի զարգացման հեռանկարները: Կատարված է համեմատական վերլուծություն Հայաստանի Հանրապետության հյուսիսային երեք մարզերի զբոսաշրջային հոսքերի վերաբերյալ: Հոդվածում ներկայացված է նաև այն հնարավորությունները, որոնց օգտագործման դեպքում Շիրակի մարզը կարող է դառնալ Հայաստանի զբոսաշրջության առաջատար տարածաշրջաններից մեկը:

Բանալի բառեր. Գյումրի, Շիրակի մարզ, հյուրանոց, անիմացիա, ծանրաբեռնվածություն, զբոսաշրջություն, արդյունավետության բարձրացում, որակ, էկոտուրիզմ, հյուրատուն:

Շիրակի մարզը և մասնավորապես մարզկենտրոն Գյումրին իր աշխարհագրական դիրքի, ինքնատիպ բնական ռեսուրսների և հարուստ պատմամշակութային արժեքների շնորհիվ համարվել է Հայաստանի զբոսաշրջության խոշոր կենտրոններից մեկը: Այն հայտնի է եղել ամբողջ Խորհրդային Միությունում:

Գյումրի և Շիրակի մարզ զբոսաշրջիկներ էին ժամանում Հայաստանի և ԽՍՀՄ բազմաթիվ քաղաքներից: Զբոսաշրջությունը հատկապես մեծ զարգացում է ապրել 20-րդ դարի 70-80-ական թվականներին, երբ Գյումրի այցելած զբոսաշրջիկների թիվը տարեկան հասնում էր ավելի քան 20.000 մարդու (սրա մեջ չի մտնում չգրանցված զբոսաշրջիկների թիվը): Այդ ընթացքում քաղաքում ձևավորվել էր զբոսաշրջիկների սպասարկման զարգացած ենթակառուցվածք: Շիրակի մարզի տարածքով և Գյումրիով են անցել 4 համամիութենական և

բազմաթիվ պայմանագրային երթուղիներ: Այդ տարիներին առանձնապես մեծ պահանջարկ էր վայելում մշակութային զբոսաշրջությունը:

1988թ. երկրաշարժից հետո զբոսաշրջությունը Գյումրիում ունեցել է զգալի անկում:

Ներկայումս թե՛ քաղաքում և թե՛ մարզի տարածքում զբոսաշրջության ոլորտում նկատվում է զարգացման բավականին բարձր տեմպ: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ անհրաժեշտություն կա կատարել որոշակի հետազոտություն քաղաքի և մարզի հյուրանոցային սերվիսի ոլորտում, քանի որ վերջինս հանդիսանում է այս ճյուղի ենթակառուցվածքային կարևոր բաղադրիչը:

Ընդհանրապես զբոսաշրջության զարգացման մակարդակը ցույց տվող գլխավոր ցուցանիշներից է տվյալ տարածքում իրացված զբոսաշրջային ծառայությունների որակական և քանակական բնութագիրը [1, էջ 211]:

Մեր կողմից կատարված հետազոտությունը նպատակ է ունեցել բացահայտելու երկու կարևոր գործոնների առանձնահատկությունը Գյումրիում և Շիրակի մարզում: Դրանցից առաջինը **զբոսաշրջիկների հոսքի քանակական բնութագիրն է, իսկ երկրորդը՝ զբոսաշրջային ենթակառուցվածքի զարգացման մակարդակը:**

Ըստ 2020 թվականի հունվարի տվյալների՝ Գյումրու և Շիրակի մարզի համար «Booking» հարթակում գրանցված է 23 հյուրանոց և 39 հյուրատուն, որոնք կարող են ընդունել և սպասարկել զբոսաշրջիկներին՝ իրականացնելով դրա համար անհրաժեշտ որոշակի ծառայությունները [3]: Այսպիսով՝ ներկայումս Գյումրիում միաժամանակ հնարավոր է ընդունել ավելի քան 1000 զբոսաշրջիկ, ինչը ավելի քան 5 անգամ գերազանցում է 2006 թ.-ի ցուցանիշը:

Մարզի մյուս բնակավայրերում, մասնավորապես Արթիկում և Մարալիկում եղած հյուրանոցները և հյուրատները, ըստ էության, չունեն զբոսաշրջային նշանակություն: Ոչ մեծ հյուրատներ կան Ամասիայի ենթաշրջանում, որոնք ընդունում են «Արփի լիճ» ազգային պարկ այցելող զբոսաշրջիկների, այն էլ՝ միայն ամառային ամիսների ընթացքում:

Հետաքրքիր է ևս մեկ ցուցանիշ. ըստ նույն «Booking» հարթակի՝ մեկ տարվա ընթացքում օրավարձով բնակարանների և առանձնատների թիվը Գյումրիում հասել էր 130-ի՝ այն դեպքում, երբ 2019թ. Դրանց թիվը չէր գերազանցում 30-ը:

Զարգացման նման բարձր տեմպի շարունակվելու դեպքում Գյումրին և Շիրակի մարզը կարող են դառնալ Հայաստանի խոշոր զբոսաշրջային տարածաշրջաններից մեկը:

Աղյուսակ 1.

Գյումրու հյուրանոցների մի քանի ցուցանիշները

	Հյուրանոցի անվանումը	Տեղերի քանակը	Հյուրանոցի կարգը (աստղ)	Էքսկուրսիոն ծրագիր	Առավոտյան նախաճաշ
1	«Նանե»	32	3 +	+	+
2	«Արաքս»	42	3 +	+	+
3	«Բեռլին»	30	-	+	+
4	«Վանատուր»	30	-	-	+
5	«Ոսկե ծիրան»	18	-	-	-
6	«Ոսկե բլուր»	18	-	-	-
7	«Փարվանա օջախ»	20	-	-	-
8	«Ալեքսանդրապոլ»	36	3 +	-	+
9	Վիլլա Կարս»	32	3	+	+
10	«Գարուն»	30	-	-	-
11	«Երազանք»	22	-	-	-
12	«Գյումրի»	110	-	-	+
13	«Զրահարս»	15	-	-	-
14	«Ալիմաս»	20	-	-	-
15	«Աստրալ»	15	-	-	-
16	«Թումոս»	15	-	-	+
17	«Ֆելիսա»	15	-	-	+
18	«Օլիմպիկ»	30	-	-	+
19	«Վիկտորիա պլազա»	30	3 +	+	+
20	«Վալե»	20	-	+	+
21	«Տիգրան Մեծ»	18	-	+	+
Ընդամենը		598			

Եթե նկատի ունենանք, որ ըստ 2019թ. տվյալների՝ Գյումրի այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է 60 հզ., ապա կարելի է ասել, որ քաղաքի և մարզի հյուրանոցային համալիրը աշխատել է բավականին մեծ ծանրաբեռնվածությամբ: Ընդ որում՝ զբոսաշրջիկները Գյումրի և Շիրակ

են այցելել հիմնականում հունիս-հոկտեմբեր ամիսներին (80%): Մնացած 7 ամիսների ընթացքում հյուրանոցները և հյուրասնները գործել են թերբեռնված: Պետք է ասել, որ զբոսաշրջային ենթակառուցվածքների եկամտաբերությունն ապահովելու համար աշխատանքային ժամանակահատվածը հաշվարկված է ոչ պակաս քան 90 օր [2, էջ 67]:

Մյուս կարևոր հարցը զբոսաշրջիկների անցկացրած օրերի վերլուծությունն է Գյումրիում: Մեր կատարած ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ Գյումրի ժամանած զբոսաշրջիկների 90%-ը քաղաքում մնացել է 1 օր՝ գիշերելով այնտեղ գտնվող հյուրանոցներից որևէ մեկում:

Հետևաբար կարելի է փաստել, որ Գյումրին համարվում է տարանցիկ քաղաք Վրաստանից դեպի Երևան զբոսաշրջային ուղղության համար: Այստեղ հիմնականում գիշերում են առավոտյան ճանապարհը շարունակելու նպատակով, չնայած մեր հարցումներից պարզվել է, որ գիշերակացի համար մնացած խմբերի մոտ կեսը պատվիրել է նաև էքսկուրսիոն ծրագիր:

Ընդհանրացնելով վերոհիշյալ ցուցանիշների հիման վրա կատարված վերլուծությունը՝ կարելի է ասել, որ Գյումրիում և Շիրակի մարզում զբոսաշրջությունը բնութագրվում է որպես դինամիկ զարգացող ճյուղ:

Համեմատելով Գյումրու հյուրանոցային համալիրը Հայաստանի մյուս քաղաքների հետ՝ ակնհայտ է դառնում, որ ներկայումս այն մեծ չափով զիջում է միայն մայրաքաղաքին:

Այժմ Հայաստանում գործում են 700-ից ավելի հյուրանոցներ: Ամրագրման «booking» համակարգում հաշվառված են 719 հյուրանոցներ, որոնցից 471-ը՝ Երևանում [3]: Հյուրանոցների ամրագրման հայկական Hotelium.am կայքում ներառված է մոտ 500 հյուրանոց [4], Բարև «Արմենիա» կայքում՝ ընդամենը 191 [5], իսկ հայկական «Սփյուռ» տեղեկատուում գրանցված են 461 հոթելներ, 15 հոսթելներ, 27 մոթելներ, 25 «B&B»-ներ [6]:

Զբոսաշրջային համալիրի զարգացման մակարդակի գնահատման համար մեր կողմից իրականացվել են հաշվարկներ տուրօրերի վերաբերյալ: Հաշվարկների կատարվել են հետևյալ բանաձևով.

$$S_{op} = Q \times \bar{C}_{վիզ.},$$

որտեղ՝ **S_{օր}**- տուրօրերի թիվն է (մարդ/օր), **Զ**-զբոսաշրջիկների թիվը (մարդ), **Ժ_{միջ}** - տվյալ ռեգիոնում զբոսաշրջիկների մնացած օրերի միջին թիվը:

Համեմատական վերլուծություն կատարելու համար՝ հաշվարկվել են երեք մարզերի ցուցանիշներ, ընդ որում՝ ընտրվել են զբոսաշրջային առումով Շիրակի մարզից համեմատաբար լավ և վատ զարգացած մարզեր: Նպատակահարմար է համարվել համեմատել Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի ցուցանիշները:

Նման հաշվարկների դժվարությունը այն է, որ չկան լիարժեք տվյալներ մարզեր այցելած զբոսաշրջիկների վերաբերյալ: Մեր կողմից հաշվարկների համար օգտագործված տվյալները գնահատականներ են, որոնք ներկայացվել են մարզպետարանների կողմից:

Աղյուսակ 2.

Տուրօրերի հաշվարկի տվյալները

№	Մարզ	Զբոսաշրջիկների թիվը (մարդ)	Զբոսաշրջիկների մնացած օրերի միջին թիվը (օր) :	Տուրօրերի քանակը (մարդ/օր)
1	Շիրակ	60 000	1	60 000
2	Լոռի	18 000	3	54 000
3	Տավուշ	95 000	4	380 000

Ըստ կատարված հաշվարկների՝ տուրօրերի թվի առավել մեծ ցուցանիշ գրանցվել է Տավուշի մարզում, որը պայմանավորված է լավ զարգացած զբոսաշրջային ենթակառուցվածքներով, ինչպես նաև բազմօրյա տուրերի անցկացման հնարավորություններով:

Շիրակի մարզ այցելած զբոսաշրջիկների թվի կտրուկ աճի պայմաններում տուրօրերի թիվը բավականին ցածր է, ինչը պայմանավորված է մարզի տարածքում մեկօրյա տուրերի գերակշռությամբ: Ի տարբերություն Շիրակի մարզի՝ Լոռիում զբոսաշրջիկների թիվը չի գերազանցում 18 հզ.-ը, որը կազմում է Շիրակի մարզ այցելած զբոսաշրջիկների թվի ընդամենը 30%, բայց տուրօրերի թվով Լոռին գրեթե հավասարվում է Շիրակի մարզին (54 հզ. մարդ/օր), որը կազմում է Շիրակի մարզի տուրօրերի քանակի 90%-ը:

Նշված վերլուծությունը թույլ է տալիս ասելու, որ չնայած Շիրակի մարզում զբոսաշրջիկների թվի կտրուկ աճին՝ տուրօրերի թիվն այստեղ ցածր է, ինչի հետևանքով հյուրանոցային համալիրը, ինչպես նաև

հասարակական սննդի օբյեկտները աշխատում են սեզոնային թերբեռնված ռեժիմով:


Ինչպես նշվեց, Գյումրիում գործող հյուրանոցների թիվը անցնում է 20-ից, հետևաբար կարելի է ասել՝ Հայաստանում գործող հյուրանոցների միայն մոտ 3%-ն է գտնվում Գյումրիում: Գյումրիում չորս և հինգ աստղանի հյուրանոցներ չկան: Առկա հյուրանոցներից մի քանիսը դասվում են «Երեք պյուն» աստղի հյուրանոցների շարքին (տես աղյուսակ 1):

Հյուրանոցների ծանրաբեռնվածությունը, հետևաբար նաև տուրօրերի թիվը ավելացնելու համար մեծ նշանակություն կարող է ունենալ «ամեն ինչ ներառված է/all inclusive» համակարգը: Շատ զբոսաշրջիկներ նախընտրում են այցելել հյուրանոցներ, որոնք առաջարկում են երեքանգամյա սնունդ: Այդպիսի հյուրանոցները հիանալի տարբերակ է համարվում զանգվածային զբոսաշրջիկների համար: Գյումրիում նմանատիպ ծառայություն չի մատուցվում: Հյուրանոցներն առաջարկում են միայն նախաճաշ:

Անիմացիոն ծառայությունները ևս ունեն վճռորոշ ազդեցություն հյուրանոցների արդյունավետության բարձրացման և գիշերակացով օրերի թվի ավելացման գործում: Զբոսաշրջիկների համար հյուրանոցների համարի հարմարավետությունից և սնունդից հետո կարևոր պայման է համարվում ժամանցի առկայությունը: Այդ իսկ պատճառով հյուրանոցային տնտեսություններում անիմացիան զբաղեցնում է գլխավոր դերերից մեկը, որը սերտորեն կապված է մյուս ոլորտների հետ և ունի որոշակի նշանակություն:

Անիմացիոն ծառայության նպատակն է հանգստացողների հետ անընդհատ շփումը, որի արդյունքից էլ կախված է զբոսաշրջիկի հանգստի որակը: Անիմացիաների որակից կարող է կախված լինել հյուրանոցի ծանրաբեռնվածությունը:

Անիմացիոն ծառայությունները համապատասխանում են հատկապես երեխաների հետ հանգստացող զբոսաշրջիկների համար: Հյուրանոցը կգրավի զբոսաշրջիկներին՝ նաև ծառայությունների լայն շրջանակներ տրամադրելով, այդ թվում՝ լողավազանի, ֆիթնես-սրահի, սպա-կենտրոնի, գեղեցկության սրահի, բժշկի սենյակի առկայությունը կարող են դրական ազդեցություն թողնել հյուրանոցների արդյունավետության գործում:



Նկար 1: Հյուրանոցների և որոշ զբոսաշրջային օբյեկտների տեղադիրքը քաղաքի տարածքում

Գյումրու հյուրանոցները պատվերի դեպքում կարող են առաջարկել անհմացիոն ծառայություններ: Տեղի հյուրանոցներում անհմացիա կազմակերպելու համար կարևոր հանգամանք ենք դիտարկել լողավազանների առկայությունը: Գյումրիում անհմացիոն ծառայություններ կարող են առաջարկել «Արաքս», «Վանատուր» և «Երազանք» հյուրանոցները: «Վանատուր» և «Արաքս» հյուրանոցները առաջարկում են ֆիննական բաղնիք (սաունա), հանդիսությունների սրահ, գործնական հանդիպումների սրահ, սրճարան, ռեստորան: «Երազանք» հյուրանոցն ունի բացօթյա լողավազան և սաունա:

Հյուրանոցների ծանրաբեռնվածությունը կախված է նաև հյուրանոցի ապրանքանիշի անվանումից: Հյուրանոցների տերերը ժամանակի հետ եկել են եզրակացության, որ եթե դրանք պահանջարկ

ունեն մի վայրում, ապա կարող են պահաջարկ ունենալ նաև մեկ այլ վայրում: Այսինքն՝ դրանք կարող են չափանիշ դառնալ, որը պահանջված է ողջ աշխարհում:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հյուրանոցային տնտեսությունների արդյունավետության բարձրացումը ուղիղ համեմատական է զբոսաշրջիկների հոսքին:

Եզրակացություններ

Կատարված հետազոտական աշխատանքի հիման վրա կարելի է եզրակացնել.

1. Շիրակի մարզում զբոսաշրջային ենթակառուցվածքները տեղաբաշխված են խիստ անհավասարաչափ, որը զբոսաշրջության զարգացման լուրջ խոչընդոտ է:
2. Զբոսաշրջիկների թվի կտրուկ աճի պայմաններում տուրօրերի թիվը փոքր է, ինչի հետևանքով մարզի հյուրանոցային համալիրը դառնում է քիչ եկամտաբեր:
3. Զբոսաշրջային ենթակառուցվածքների, մասնավորապես հյուրանոցների ցածր արդյունավետությունը պայմանավորված է զբոսաշրջային հոսքերի խիստ սեզոնայնությամբ և անիմացիոն ծառայությունների ցածր որակով:

Առաջարկություններ

Գյումրիում հյուրանոցների գործունեության արդյունավետությունը կախված է ոչ միայն որակից, այլև գնային քաղաքականությունից: Որքան բարձր է հյուրանոցային համարի գինը, այնքան քիչ հասանելի է դառնում զանգվածային զբոսաշրջության համար: Միջսեզոնային ժամանակահատվածում զեղչային համակարգը գործում է ոչ բոլոր հյուրանոցներում: Հյուրանոցներում ծանրաբեռնվածություն ապահովելու համար անհրաժեշտ է ոչ սեզոնային ամիսներին իջեցնել համարների գները խելամիտ տոկոսներով: Գյումրիում սեզոնն ընդգրկում է ապրիլ-հոկտեմբեր ամիսները: Հետևաբար նոյեմբերից ապրիլ ամիսներին անհրաժեշտ է կազմակերպել բազմաթիվ փառատոններ, միջոցառումներ, իջեցնել գները, առաջարկել յուրօրինակ ճանապարհորդություններ:

Անհրաժեշտ է նաև ձևավորել զբոսաշրջային նոր, մրցունակ ուղղություններ, ապահովել բնական և պատմամշակութային ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու պահպանությունը, առևտրայնացումը, ինչպես նաև զարգացնել ձմեռային և սպորտային զբոսաշրջությունը: Գյումրին և Շիրակի մարզն ունեն բոլոր

հնարավորությունները վերականգնելու և զարգացնելու առողջարանային զբոսաշրջությունը: Մեծ հնարավորություններ կան էկոզբոսաշրջության զարգացման համար:

Հետազոտությունն իրականացվել է ՇՊՀ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № 02-SCI-2019 գիտական թեմայի շրջանակներում:

ГОСТИНИЧНЫЙ СЕРВИС В ШИРАКСКОМ РЕГИОНЕ И ЕГО РАЗВИТИЕ

Мартirosyan Л. М., Абраамян В. М., Саргсян Р. С., Саргсян Э. М.

В статье представлены особенности гостиничного сервиса и перспективы развития туристического комплекса в Ширакском регионе и в Гюмри. Проведен сравнительный анализ между туристическими потоками трех северных регионов Республики Армения. В статье также представлены те возможности, при использовании которых Ширакский регион может стать одним из ведущих туристических регионов Армении.

Ключевые слова: Гюмри, Ширакский регион, гостиница, анимация, нагрузка, туризм, повышение эффективности, качество, экотуризм, гостиничный дом.

HOTEL SERVICE IN SHIRAK REGION AND PERSPECTIVES OF ITS DEVELOPMENT

Martirosyan L. M., Abrahamyan V. M., Sargsyan R. S., Sargsyan H. M.

The features of hotel service and perspectives of development of touristic complex in Shirak region and Gyumri are represented in the article. Comparative analysis of touristic steams of three northern regions of Republic of Armenia is performed. In the article the possibilities are also represented, by the use of which Shirak region could become one of the leading touristic regions of Armenia.

Keywords: Gyumri, Shirak region, hotel, animation, loading, tourism, effectivity upgrading, quality, ecotourism, hostel.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Яковлев Г. А. Экономика и статистика туризма. Учебное пособие. 4-е изд., перераб. и доп. М.: Издательство РДЛ. 2007. 480 с.
2. Супруненко Ю. П. Горы зовут: Горно-рекреационное природопользование. Москва. Тривант. 2003. 368 с.
3. <https://www.booking.com/index.ru.html?label=gen173nr->
4. <https://hotelium.am/hyuranocner.php>
5. https://barevarmenia.com/am/armenia_hotels/properties/0/4
6. <https://www.spyur.am/am/companies/spyur-information-system/1>

Տեղեկություններ հեղինակների մասին

Մարտիրոսյան Լ. Մ. – աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ mlevon2003@mail.ru

Աբրահամյան Վ. Մ. - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ v.abrahamyan62@mail.ru

Մարգարյան Ռ. Մ. - երկրաբանական գիտությունների թեկնածու
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ rudolf-sargsyan@mail.ru

Մարգարյան Հ. Մ. - մագիստրոս
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ hermine.sargsyan.95@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 18.06.2020
Գրախոսվել է՝ 08.11.2020